(Չի գործում 2017 թվականի ապրիլի 1-ից)

Տպագրված է 3 օրինակից
Օրինակ ___

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
10/04/2014թ թիվ 8-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

_____ Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

«___» _____ 2014թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-042

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՌԿԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՄԱՆ)

ԵՐԵՎԱՆ – 2014

ԲԱԺԻՆ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ ՃՈ) կողմից իրականացված վարչարարության արդյունքում բացահայտված կամ այլ միջոցառումների արդյունքում Բյուրոյին հայտնի դարձած՝ Տեղեկատվական համակարգում առկա սխալ կամ կասկածելի տեղեկատվության ուղղման կարգը:

ԳԼՈՒԽ 2

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՌԿԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՄԱՆ ԿԱՐԳԸ

2. Տեղեկատվական համակարգում առկա սխալ կամ կասկածելի տեղեկատվության ուղղման գործընթացն իրականացվում է համաձայն Հավելվածի: Մասնավորապես.

1) Տեղեկատվական համակարգ մուտքագրվող և պահպանվող տեղեկությունների ամբողջականության և արժանահավատության պահպանման նպատակով Բյուրոն պարբերական հարցումներ է կատարում ՃՈ՝ վերջինիս կողմից իրականացվող վարչարարության արդյունքում իրեն հայտնի դարձած Տեղեկատվական համակարգում առկա սխալ կամ կասկածելի տեղեկատվության վերաբերյալ:
2) Բյուրոն սույն կետի 1)-ին ենթակետի համաձայն իրականացված հարցման, կամ այլ միջոցառումների արդյունքում իրեն հայտնի դարձած՝ Տեղեկատվական համակարգում առկա սխալ կամ կասկածելի տեղեկությունները տրամադրում է դրանք մուտքագրած ապահովագրական ընկերություններին՝ սահմանելով դրանց ուղղման համար վերջնաժամկետ:
3) Յուրաքանչյուր ապահովագրական ընկերություն ստուգում է ստացած տեղեկատվությունը և իրականության հետ անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում սույն կետի 2)-րդ ենթակետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան ուղղումներ է կատարում Տեղեկատվական համակարգում:
4) Սույն կետի 3)-րդ ենթակետի համաձայն Տեղեկատվական համակարգում ուղղումներ կատարելուց հետո, ապահովագրական ընկերությունները անմիջապես դրանց վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում Բյուրո:
5) Բյուրոն համադրում է ներկայացված հաշվետվությունները Տեղեկատվական համակարգում փոփոխված տեղեկությունների հետ և կազմում Տեղեկատվական համակարգում իրականացված ուղղումներ մասին հաշվետվություն:

6) Բյուրոն Տեղեկատվական համակարգում իրականացված ուղղումներ մասին համապատասխան հաշվետվության տեսքով տեղեկացնում է ՃՈ-ին:

ԳԼՈՒԽ 4
ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Սույն կանոնների շրջանակում ապահովագրական ընկերությունների և Բյուրոյի միջև տեղեկատվությունների և հաշվետվությունների փոխանակումը իրականացվում է Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով: Սի-Բի-Էյ-նեթ համակարգի աշխատանքի խափանման դեպքում սույն կանոններով սահմանված հաշվետվությունների և տեղեկությունների փոխանակումը կարող է իրականացվել պաշտոնական էլեկտրոնային փոստով կամ առձեռն՝ ստացման մասին ստորագրությամբ:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՌԿԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳԾԱՊԱՏԿԵՐ